Օր. Եղ. Ցս. Քս. 1744 Նոյեմ. 30. Էլիզաբէդն

Գերյարգելի Տեառն Տեառն Մխիթար Հայր Աբբային վերոյ, և. բնաւ միհաբանիցն մեր ցանկալի հոգևոր հարանց, խոնարհական սիրոյ ողջուն կու մատուցանեմք վերոյ գրեցելոցն ամենից

. . . Բրական կայ մէկ պատկեր մեծ պղնձէ, որ է 70 խանթըրէ ծանտրութիւն նորայ, և է պատկեր սրբուն օհաննէս նէբօմէձէնի. իրաւ որ ես մեղաւորս ալ քալիլ իմ բրական, և զայն մեծ անվանի ջուրն անցիլ իմ, որոյ անունը մօլտաւ կասեն, և զան պատկեր ջրին քնարն է, կարմունճին գլօխը. մայ վաղուց ժամանակէ մօռայցիլ իմ թէ որպիսի մեծ է։ Նայ կասին թէ զան պատկերն աստուծոյ հրամանաւն նուն տեղն դառ- ձուցած ըլայ զդէմն դէպ ի իրեն եկեղեցին, և օլտրված ըլայ պօյը ինքն ըսդ ինքեան այսինքն թէ բրուսն գալօվ զանդիհէն, որմէ երեսն դէպ ի բրուսին կանգնած ըլայ նայ պատկերն զերեսն դառձուցած ըլայ բրուսէն և բրուս գալօվ և առիլ է զԲրակայ մեծ անվանի քաղաք, և կօղօպտիլ է զամենայն գանձն և մալն և զամենայն անօթ ոսգէղէն և արձթեղէն, բառնալով 100 արապայ մն և գնաձիլ է. և էտէն կրկին գնաձիլ ին ծանտր հեծել և հասիլ ին զբրուսն ու չատ մարդ կօրիլ է և զամենայն աղէկն ետ դառ- ձուցած ըլան...։

Պ[ետրոս] Քէլիեան

ՃԼԲ.

Հետևեալ նամակին զրիչն է կեսարացի Վրթանէս Արքեպիսկոպոս Ստեփանեան[1], *որմէ ուրիշ թուղթ մը հրատարակեցինք արդէն (տես ՃԺԹ)։*

Մեր նամակագրին մասնաւոր ուշադրութիւնը գրաւողն է Սարաֆեան Սարգիս արքեպիսկոպոսը։ Սա Արևելքէն Վենետիկ եկած է 1744-ին։ 1745-1747 զինքը Հռովմ կը գտնենք, ուր 1745 Նոյեմբեր 20-ին Հաւատոյ դաւանութիւն կու տայ. կը ներկայանայ նաև Բենեդ. ԺԴ.ին ու կը կատարէ նաև նոյն քաղաքին մէջ Հայ Միսի ձեռնադրութիւններ. (Սարաֆեանի ընդհանուր գործունէութեան վրայ տե՛ս կենսագրութիւնը Գալեմքեարեանէ)։

Թէ Սարգիս իր ժամանակի ազգային շրջանակին մէջ մեծ յարգանք վայելած է՝ կը տեսնենք զայդ Մայրավանքիս դիւանական մէկ ուրիշ անտիպ թուղթէն ալ. Անդրէաս անուն անձէ մը գրուած առ Մխիթար յանձնարարական մ'է, երբ նա արդէն Վենետիկ ժամանած էր. ահա սոյն պատառիկը. «Մեր ամենապայծառ և գերյարգելի «սարգիս վարդապետի կողմանէ որ եկաւ Վենետիկ՝ յանձնեմ տէրութեանդ, թէպէտ «ոչ է պատեհ մեղաւորիս նորայ կողմանէ բան գրել, տէրութիւնդ քաջ գիտէ որ- «քան մեծ անուն և համբաւ ունէր ի մէջ հայոց. եթող յամէնն ի փառս յիսուսի «և մեծ անարգանք կրեաց հայոց ազգէն, մեծ տառապանօք հազիւ նաւ մտաւ» (Գր. 25 փետր.ի 1745. Իզմիր)։

Սարգիս արքեպս.է առ Մխիթար գրուած ինը նամակներ, որոնց բնագիրները կը պահուին մեր Դիւանը, հրատարակուած են Գալեմքեարեանի երկասիրութեան մէջ, որուն ի նպաստ օրինակողն եղած է Հ. Մ. Պոտուրեան[2]։

---

1. Տես կենսագրութիւնը՝ Գալեմքեարեանի «Կենսագրութիւն Սարգիս Արքեպս.ի Սարաֆեան»ի մէջ, 207-213. Վիեննա 1908. Տպ. Մխ.։

2. Անդ էջ 145։